

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ Ս. ՏԱԹԵՎ ՎԱՆՔՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 2-ին և 4-ին հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի յոթ երիտասարդ աբեղաների վարդապետական թեզերի պաշտպանությունը, որոնցից վեցը Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում ստացան մասնավոր վարդապետության չորս աստիճաններ: Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ և օրհնությամբ, Տ. Սերովբե աբղ. Իսախանյանի վարդապետական չորս աստիճանների տվչությունը տեղի ունեցավ նոյեմբերի 12-ին Սյունյաց թեմի առաջնորդանիստ Ս. Տաթև հոչակավոր վանքում՝ ձեռամբ նույն թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպս. Արիստակեսյանի:

Առավոտյան ժամը 11-ին Ս. Տաթև վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվում է սուրբ և անմահ պատարագ: Պատարագիչն է Մայր Աթոռի միաբան Տ. Ստեփանոս վրդ. Զաքայանը: Պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի ամերիկահայ ուսանողները՝ ղեկավարությամբ Տ. Մամիկոն աբղ. Քիլեջյանի, որոնք նոյեմբերի 11—12-ին ուխտագնացությամբ գտնվում էին Սյունյաց թեմում:

«Հայր Մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը իր սրտի խոսքն է հղում հավաքված շուրջ հարյուր հավատացյալներին՝ ի մասնավորի ասնդրադառնալով Ս. Տաթև վանքի պատմական անցյալին, նրա հոգևորականների ունեցած դերին Հայ Եկեղեցու կյանքում ու մշակույթի զարգացման գործում, հանգամանալի ներկայացնում է Ս. Տաթևի եռամեծար վարդապետի՝ Ս. Գրիգոր Տաթևացու գործունեությունը: Ինչպես հայտնի է, Տաթևացու մարմինը ամփոփված է Ս. Տաթև վանքի Ս. Պողոս-Պետրոս Մայր տաճարի հարավ ին պատի մոտ, որի վրա հետագայում կառուցված է փոքրիկ մատուռ-դամբարան:

Հավարտ ս. պատարագի, նախագահությամբ Ասողիկ սրբազանի, հոգեհանգըստյան պաշտոն է կատարվում՝ ի հիշատակ վանքի կառուցողների, նրա հոգևոր սպասավորների, ինչպես նաև վերջերս նահատակված Մայր Աթոռի երիտասարդ միաբան Տ. Վահան աբղ. Դավթյանի:

Այնուհետև նույն եկեղեցում տեղի ունեցավ Սերովբե աբեղայի մասնավոր վարդապետական աստիճանի տվչությունը: Ձեռնադրության Մաշտոցը վկայում է, որ մասնավոր և ծայրագույն վարդապետական աստիճանների տվչության ուրարողակարգը սահմանել է Ս. Գրիգոր Տաթևացին: Իսկ ավանդությունը պատմում է, թե յուրաքանչյուր ընծայյալ տվչությունից հետո ծնկաչոք ու երկյուղածությամբ մերձենում էր Ս. Տաթևի հոչակավոր գավազանայուրին, և եթե ընծայյալը արժանի էր իր ասստիճանին, գավազանը հավատքի զորությամբ սկսում էր շարժվել:

Վերականգնվում է ավանդությունը, և այսուհետ բազմաթիվ միաբաններ ուխտի կգան՝ խոնարհվելու «ճշմարտութեան վարդապետի, գերահանճար հռետորի և ան-

յաղթ ախոյեանի սուրբ հաւատոյ՝ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ» մասունքներին և նրա բարեխոսությամբ արժանի կդառնան ստանալու վարդապետական իշխանության աստիճանները:

Հավարտ տվչության Սյունյաց թեմի առաջնորդը իր պատգամն է տալիս նորաստեղծ վարդապետին.

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Ա.ռ զսուրբ գաւազանն ի ձեռաց Հոգւոյն Սրբոյ, ունել իշխանութիւն քարոզել զբանն կենաց ողջամիտ վարդապետութեան յունկն հաւատացելոց» («Մաշտոց»):

Սիրելի հոգևոր եղբայրներ, սաներ հոգևոր ճեմարանի և հավատացյալներ, Տաթևի վանքի Ս. Գրիգոր Լուսավորիչ խրնկյալ այս տաճարում ձեզ հետ միասին հայցելով Ս. Հոգու շնորհները ըստ Հայաստանյայց Եկեղեցու կանոնական Մաշտոցի, կատարեցինք տվչությունը հոգեշնորհ Տ. Սերովբե արեղայի մասնավոր վարդապետության՝ չորս աստիճաններով: Աղոթքների, շարականների, քարոզների, ընթերցվածքների հոգեծորուն. խոսքերով, մեր նախնյաց կարգով ու պատվով հայոց եկեղեցականաց փաղանգին ավելացավ ևս մեկ վարդապետ, անվամբ Սերովբե:

Հոգևոր եղբայր Սերովբե վարդապետ, դու, որ կոչված ես սպասավորելու Սյունյաց աշխարհում, որպես օգնական թեմի առաջնորդ եպիսկոպոսի, ցայսօր կատարեցիր սպասավորությունդ աբեղայական, սակայն հետ այսու ստանալով մասնավոր վարդապետության չորս աստիճանները, պարտ է քեզ, որդյակ, շրջել Սյունյաց աշխարհում գավառե-գավառ, քարոզելու «զբանն կենաց ողջամիտ վարդապետութեամբ», «ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս», «կոչել յապաշխարութիւն զմեղուցեալս և դարձուցանել զմոլորեալս ի գիտութիւն ճշմարտութեան»: Ուրեմն՝ «երթ և քարոզեա զաւետարանն սուրբ...»:

Դժվարին է այդ երթը, գիտենք, մանավանդ այս հեռավոր Սյունյաց գավառներում, բայց որ արդեն իսկ գոտեպնդվեցիր Ս. Հոգու շնորհներով, ինչպես նաև արիացար եռամեծար վարդապետի յոթնալույս պատգամներով, մենք էլ մեր հոգևոր դասով աջակից ենք քեզ, այլևս վարանելու տեղիք չպետք է տաս: Ունկնդիր Տաթևացու պատգամին. «Առանց աչառանաց և երկիւղի ուսո և խրատեա, սաստեա, հանդիմանեա և դարձեալ մխիթարեա ըստ առաքելոյն բանի», զի Աստված ընդ քեզ է, մենք էլ՝ աղոթակից, այժմ և հավիտյանս, ամեն»:

ԹՂԹԱԿԻՑ